ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

N 07/21/5663-2023

«07»..06.....2023 թ.

ԱՁ ՀՐԱՆՏ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆԻՆ

Հարգելի՛ պարոն Համբարձումյան,

ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության և Հրանտ Համբարձումյան Ա/Ձ-ի միջև 15.09.2022թ. կնքված թիվ «ԲՏԱՆ-ԷԱՃԱՊՁԲ-2022/10-1» ծածկագրով գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) համաձայն, Ձեր ընկերությունը պարտավոր էր սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում մատակարարել պայմանագրի անբաժանելի մասը հանդիսացող N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագրով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար: Ապրանքի մատակարարման ժամանակացույցը սահմանված է Պայմանագրի N 2 հավելվածով:

Համաձայն Պայմանագրի N 2 հավելվածով սահմանված մատակարարման ժամանակացույցի՝ ապրանքը պետք է մատակարարվեր Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 20 օրացուցային օրվա ընթացքում: Սակայն Հրանտ Համբարձումյան Ա/Ձ-ի կողմից Պայմանագրով սահմանված ապրանքները չեն մատակարարվել:

Համաձայն Պայմանագրի 2.1.7 կետի՝ Գնորդն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը. Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝ ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 5 օրից ավելի:

Ելնելով վերոգրյալից՝ ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարությունը, հիմք ընդունելով 15.09.2022թ. կնքված թիվ «ԲՏԱՆ-ԷԱՃԱՊՁԲ-2022/10-1» ծածկագրով գնման պայմանագրի 2.1.7 կետը, 2023 թվականի հունիսի 7-ին միակողմանի ամբողջությամբ լուծում է Պայմանագիրը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու դեպքում պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման

Հայաստանի Հանրապետություն, Երևան 0010, Վազգեն Սարգսյան 3/3, հեռ. (37410) 590009, էլ. հասցե՝ narek.melkumyan@hti.am

հիման վրա լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Տեղեկացնում ենք նաև, որ Հրանտ Համբարձումյան Ա/Ձ-ն պարտավոր է սույն ծանուցումը ստանալուց հետո 5 (հինգ) բանկային օրվա ընթացքում ՀՀ ֆինանսների նախարարության գանձապետական «900005028106» հաշվեհամարին վճարել տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 %-ի չափով՝ 14 820 (տասնչորս հազար ութ հարյուր քսան) ՀՀ դրամ գումարը: Ինչպես նաև ՀՀ ֆինանսների նախարարության գանձապետական «9000050000758» հաշվեհամարին ենթակա է գանձման 303 000 (երեք հարյուր երեք հազար) ՀՀ դրամ, որպես տուժանք՝ պայմանագրի կատարման ապահովում, ՀՀ ֆինանսների նախարարության գանձապետական «9000050000664» հաշվեհամարին ենթակա է գանձման 454 500 (չորս հարյուր հիսունչորս հազար հինգ հարյուր) ՀՀ դրամ որակավորման կատարման ապահովում:

Միաժամանակ տեղեկացնում ենք, որ եթե 5 (հինգ) բանկային օրվա ընթացքում Ձեր կողմից վճարվի վերը նշված վճարման ենթակա գումարները, ապա ընկերությունը չի ներառվի գնումներին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Նշված գումարները անհրաժեշտ է վճարել Կենտրոնական գանձապետարանում լիազորված մարմնի անվամբ բացված վերը նշված գանձապետական հաշիվներին և վճարման կտրոնների բնօրինակները ներկայացնել ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն:

Հարկ ենք համարում նաև նշել, որ համաձայն ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետի՝ պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ ծանուցումը սահմանված կարգով կհրապարակվի www.procurement.am պաշտոնական տեղեկագրում:

6/7/2023

X

ՆԱՐԵԿ ՄԵԼՔՈՒՄՅԱՆ

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝ Signed by: MELKUMYAN NAREK 31h 1850200 **ՆԱՐԵԿ ՄԵԼՔՈՒՄՅԱՆ**

Գնումների բաժին՝
Օ. Ասատրյան
Հեռ.՝ 010 59 01 61